ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

սեպտեմբերի 2024 թվականի №-Ա

«ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԵՎՐՈԷՆԵՐԳՈՀՈԼԴԻՆԳ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0702 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հունիսի 17-ի №260-Ա որոշմամբ «ԵՎՐՈ ԷՆԵՐԳՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Եվրոէներգոհոլդինգ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0702 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0702 լիցենզիա) պայմանների 13-րդ կետի համաձայն ՝ Ընկերությանը պարտավորեցվել էր մինչև 2023 թվականի փետրվարի 18-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ) ինչը, սակայն, չի կատարվել, ի հետևանք որի՝ նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2023 թվականի հոկտեմբերի 18-ը,

բ) Ընկերությունը մինչև 2023 թվականի հոկտեմբերի 18-ը Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ինչը փաստվել է Հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 17-ի №19-Ա որոշմամբ և, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, Նախագիծը ներկայացնելու ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված՝

մինչև 2024 թվականի հունիսի 18-ը, մինչդեռ նշված ժամկետում այն դարձյալ չի ներկայացվել,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի հունիսի 24-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0702 լիցենզիայի գործողությունը կասեցնելու հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 24-ի №ԳԲ/34.3-Մ2-12/2794-2024 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողով ներկայացված 2024 թվականի հուլիսի 31-ի №Ա-11 գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տված խախտումը և հայտնել է, որ Կայանի կառուցման նախագծի պետական համալիր փորձաքննություն ստանալու համար աշխատանքները գտնվում են հանրային լսումների վերջնական փուլում և կավարտվեն մինչև 2024 թվականի օգոստոսի 10-ը, ինչից հետո մեկամսյա ժամկետում կանցնի պետական համալիր փորձաքննություն: Միևնույն ժամանակ խնդրել է մինչև սույն թվականի սեպտեմբերի 15-ը չիրականացնել ԼԷ №0702 լիցենզիայի գործողության կասեցումը՝ հայտնելով, որ մինչև տվյալ ժամկետի ավարտը Հանձնաժողով կներկայացվի դրական փորձագիտական եզրակացություններով պետական համալիր փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագիծը,

ե) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ հետևյալ պայմաններով.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ առանց որևէ վարչական և ֆինանսական պատասխանատվության.

2) 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

3) նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ անգամ երկարաձգված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում՝ արտադրության լիցենզիայի գործողությունը կասեցվում է.

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0702 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի հունիսի 18-ը, Նախագիծը չի ներկայացրել Հանձնաժողով,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼԷ №0702 լիցենզիայի պայմանների 13-րդ կետով սահմանված և երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում՝ մինչև 2024 թվականի հունիսի 18-ը, Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու հիմքով կասեցնել Ընկերության ԼԷ №0702 լիցենզիայի գործողությունը՝ մինչև կասեցման պատճառի վերացումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2024թ.